

- **Պարոն նախարար, Դուք համարվում եք գործող կառավարության ամենաերազող մարդը, գործիչը: Կիսու՞մ եք այս տեսակետը, եթե այո՝ որքանո՞վ է արդարացված տնտեսական, քաղաքական գործիչ երազող լինելը:**

- Ոչ միայն արդարացված է, այլև ցանկալի է, որ քաղաքականություն իրականացնողը ավելի երազող լինի, քան մեր հասարակությունն ընդհանուր առմամբ, որպեսզի կարողանա առաջնորդել: Շատ կարելու է, որ նա իր այդ պատկերացումները ազատ հաղորդի, չամաչի ու չվախենա, որովհետև դրանք իրականություն չեն դառնա: Մենք զարգացած հասարակություն չենք դառնա, եթե չկարողանանք ամեն անգամ մեկ մակարդակով ավելի բարձր քննարկում կազմակերպել: Ես առաջարկում եմ, որ մեզանից բացի, մյուսներն էլ ուսումնասիրություններ կատարեն՝ ուղղված մեր տնտեսական զարգացման տեսլականի շուրջ համաձայնության ձեռքբերմանը: Այս տարի ԶԶ Էկոնոմիկայի նախարարությունը պատրաստեց եւ հրապարակեց Հայաստանի Տնտեսական զեկույցը: Հաջորդ տարի թեման լինելու է արտահանման խթանումը, որը զարգացնելու ենք ու

փորձելու ենք ապագայի տեսլականի շուրջ համաձայնություն կառուցել: Այն երկրները, որոնք արագ զարգացում են ապրել, ունեն երեք-չորս ձեակերպած խնդիր, որ սերնդեսերունդ չեն փոխվում: Իշխանություն է փոխվում, նախարարներ են փոխվում, բայց այդ խնդիրներն այնպիսի կուռ փոխհամաձայնեցման վրա են կառուցված, որ բոլորն այդ ուղղությամբ աշխատում են: Կան երկրներ, որոնց փորձը հիմա մենք ուսումնասիրում ենք՝ մասնավորապես օտարերկրյա ուղղակի ներդրումների առումով, ինչը մեր քաղաքականության առաջնային ուղղություններից է: Մենք պետք է լինենք տարածաշրջանում ամենամրցունակ երկիրը՝ ելնելով մի շարք պայմաններից: Մենք պետք է ամենակրթված ժողովուրդը լինենք: Նման բաները հասկանալի են բոլորին ու չեն փոխվում 20-30 եւ ավելի տարիների ընթացքում: Սա շատ կարևոր ըմբռնում է, որ եւ՛ հանրապետության նախագահը, եւ՛ կառավարությունը մշտապես բարձրաձայնում են: Դրանց շուրջ որոշակի հոռետեսություն դեռես պահպանվում է. պարզապես թերիավատ են, որ կիրականանա: Իսկ դրանցում համոզելը առաջնորդների իրական

## ԱՌԱՆՑ

# ԲԱՐՁՐ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ

## ՀՆԱՐԱՎՈՐ ՂԵՆ

# ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### Ներսես ԵՐԻՑՅԱՆ

Հայաստանի  
Հանրապետության  
Էկոնոմիկայի  
նախարար



Չրուցում է  
Մարգալետ ԽԱԶԱՏՐՅԱՆԸ



նացնելիքն է: Ամենակարեւորը՝ տեսլականի ճանապարհը քանոնով գծված չի կարող լինել: Դա նշանակում է, որ ապագան միշտ անորոշ է, եւ պետք է կարողանա որոշակի կոնսենսուս ստեղծել դրա շուրջ, որպեսզի պատկերացումները փոխարինես վարքագծի: Այդ տեսակետից անհրաժեշտ է այս ծրագրերից հեռու պահել նրանց, ովքեր չեն հավատում դրանց իրականացմանը: Եթէ նպատակը վա, եւ այն արդարացված է, ու տեսնում ես, որ օժանդակողների թիվն ավելանում է, ուրեմն՝ պետք է առաջ գնաս:

**- Գուցէ հասարակությունը առաջին պահին չընկալի Ձեր այս ծրագրերը կամ դրանց մի մասը, բայց պետք է լինի թիվ, որը կկրի այդ գաղափարները եւ կփորձի իրականացնել այդ ծրագրերը:**

- Ես համաձայն չեմ, որ հասարակությունը չի ընկալում: Հասարակությունը շահագրգիռ է դրա իրականացմամբ: Հնարավոր չէ, որ մարդը չցանկանա բարեկեցիկ, լավ կրթված հասարակության մեջ ապրել: Հասարակությունն ուզում է հասկանալ, թե ինչպես է դա իրականացվում:

**- Հասարակությունն ուզում է հասկանալ նաեւ, թե ովքեր են իրականացնողները: Հասարակության հավատի, վստահության հարցը կա:**

- Տեսակետը կիսում եմ: Հանրապետության նախագահը Հանրապետական կուսակցության համագումարին իր ելույթում հստակ շեշտեց, որ հավատը հնարավոր է վերականգնել, եթէ մեր խոսքն ու գործը նույնը լինեն: Մենք թիմ ենք. կարծում եմ, ճիշտ է՝ դեռեւս բավական շատ ճանապարհ ունենք հաղթահարելու բոլոր բնագավառներում, բայց արդեն կան ոլորտներ, որտեղ մեր խոսքն ու գործն իրոք համապատասխանում են: Մեր նախագծերին օժանդակողների թիվն էապես մեծանում է: Կարող եմ օրինակ բերել «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը: Եղավ մի քանի արձագանք, թե հերթական մենաշնորհն են ձեւավորում, ինչ-որ մեկին հնարավորություն են տալիս եւ այլն, սակայն հասարակության արձագանքը հակառակն էր: Գաղափարի շուրջ հավաքվել էին կրթական, մասնավոր եւ հանրային հատվածները... իրենց ստեղծեցին այդ ֆորումը՝ բացատրելու, որ համախմբելու ճանապարհը հենց սա է: Այդ ուղղությամբ մենք որեւէ ջանք չենք գործադրել: Նախաձեռնությունը եկել է հակառակ կողմից:

**- Դուք նշեցիք արտահանման խթանմանն ուղղված ծրագրի իրականացման մասին: Արտահանումը ավելի քան 4 անգամ զիջում է ներկրմանը, եւ աստիճա-**

**նաբար համոզվումք է ձեւավորվում, որ մեր տնտեսական քաղաքականության արմատական ուղղությունը ներմուծումն է: Խոսում ենք արտահանման մասին, բայց մեր արտահանած ընդամենը 15 անուն ապրանքատեսակները կազմում են արտահանման ամբողջ ծավալի 80%-ից ավելին: Այդ ապրանքներն էլ հայտնի են բոլորիս: Մենք արտահանելու ապրանք չունենք: Ուրեմն՝ արտահանման խթանման ի՞նչ կոնկրետ ծրագիր է մշակված:**

- Խնդիրն այն է, որ արտահանումն ընդլայնելու համար մենք պետք է կարողանանք լուծել թիվ մեկ խնդիրը՝ շուկաների հասանելիությունը: Դրան հասնելու համար տարիների աշխատանք է պետք: Ես ուզում եմ, որ գոնե 3 տարվա ընթացքում արդյունքներ ունենանք, բայց իմ եվրոպացի գործընկերները համարում են, որ դրա համար առնվազն 5 տարի է պետք: Այդուհանդերձ այդ առումով մենք առաջընթաց ունենք: Նախ՝ մենք պետք է կարողանանք մուտք ունենալ զարգացած շուկաներ: Բացի այդ, լինելով փոքր երկիր՝ պետք է բաց լինենք, որ արտահանենք: Խոշոր շուկաներում վատ ապրանք հնարավոր չէ վաճառել, որովհետեւ այդ շուկաներն իրենց ունեն վատ ապրանքներ եւ հովանավորչության միջոցով կարողանում են պաշտպանել դրանք: Հատկապես մեր տարածաշրջանի երկրներում այդ երեւույթը համատարած բնույթ է կրում եւ նույն որակի ապրանքով չես կարող մրցակցել իրենց շուկայում:

**- Բայց այդ շուկաներում հայտնվելու եւ հաստատվելու համար նախ պետք է ապրանք ունենանք:**

- Ոչ, այդպես չէ: Պետք է նախ ենթակառուցվածքներ ունենալ, որպեսզի հնարավոր լինի այդ տիպի ապրանքների արտադրություն ապահովել: Եվ դա կախված է երկու հանգամանքից. նախ՝ շուկայի կարգավորումը, որն առայսօր ինստիտուցիոնալ հենքի վրա չէ, եւ երկրորդ՝ համաշխարհային տնտեսության արագ աճող (ուզում եմ շեշտել արագ աճող եւ ոչ թե ամենամեծ կամ խոշոր շուկաներում) հատվածներում հայտնվելը: Շուկայի կարգավորման մասով կարելու է որակի գործուն համակարգը, ինչպես նաեւ գիտական չափագիտությունը, որով մենք կկարողանանք հասկանալ, թե Հայաստանում ստեղծվող շարժիչը կամ ծիրանը տեսակավորելիս չափագիտական ինչ նորմերի պետք է համապատասխանեցվի, ինչպես պետք է սարքերը ստուգաչափվեն այդ նորմերի նկատմամբ, որպեսզի մշտապես արտադրվեն համապատասխան որակի ապրանքներ: Սա

ենթակառուցվածք է, որտեղ առաջին հերթին պետք են մարդիկ, գիտելիք, ինչպես նաեւ սարքավորումներ ու տեխնոլոգիաներ: Դա ինքնըստինքյան կբերի մեր ողջ երկրի տեխնոլոգիական վերափոխմանը: Այսինքն՝ նոր տեխնոլոգիայի մակարդակում ստեղծված արդյունքը կհամապատասխանի այդ շուկաներին, եւ դրանց արժեքն էլ կավելանա:

Մեր զարգացման մակարդակը որոշելու համար նախ պետք է փորձենք հասկանալ կարգավորման դաշտը՝ ստեղծելով այն ենթակառուցվածքը, այսինքն՝ ճանապարհը, որի օգնությամբ մարդիկ բնականորեն կհայտնվեն նոր մակարդակի վրա: Պարզ օրինակ՝ եթե փոխում ես ճանապարհների որակը, բայց դարձյալ թրթուրավոր տրակտորները դրա վրայով անցնում են, այսինքն՝ չի փոխվել մնացած միջավայրը, ապա այդ ճանապարհի կառուցումը անիմաստ է:

**- Ուրեմն՝ դրանց համար էլ հատուկ ճանապարհ պետք է կառուցել...**

- Այո: Դա արդեն կլինի նոր մոտեցմամբ ենթակառուցվածք: Ծանապարհի տակ պետք է լինեն հատվածներ, որտեղից կարող են տրակտորներն անցնել: Կամ պետք է լինեն առանձնացված ճանապարհներ: Դա ծախս է, որն արդարացված է՝ երկարաժամկետ կտրվածքով: Նույնն է նաեւ շուկա մուտք գործելու պարագայում: Չարգացած, ավելի բարդ շուկաներ մուտք գործելը երաշխիք է լինելու, որպեսզի եւ՝ կրկնապատկենք մեր արտադրությունը, եւ՝ այդ կրկնապատկման մեծ տեսակարար կշիռն արդեն արտահանելի դառնա: Բայց դա չի նշանակում, որ արտահանում-ներմուծում տարբերությունը կարող է էապես կրճատվել, որովհետեւ դրան զուգահեռ՝ մեր սպառման ցանկը կընդլայնվի, եւ մենք կսկսենք սպառել նաեւ այլ ապրանքներ:

**- Դա շատ լավ կլինի: Բայց այն դեպքում, երբ արտահանելու բան ունենանք: Դուք բացատրում եք, որ առաջին արդյունքները կլինեն լավագույն դեպքում 5 տարի հետո: Մինչ այդ մենք պետք է ապրենք, այս երկրի տնտեսությունը պետք է զարգանա ու բավարարի աճող պահանջները: Լուրջ, իրական արդյունք, եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, կարող ենք ունենալ 8-10 տարի հետո: Մինչ այդ ինչպե՞ս է զարգանալու այս երկրի տնտեսությունը:**

- Արդեն մեկ-երկու տարի հետո մարդիկ կտեսնեն, ու կարգավորումը իրականություն է դարձել: Այսինքն՝ որոշակի որակ կապահովվի, եւ հսկողությունը տեսանելի կլինի. աստիճանաբար սպառող

ինքը կսկսի համագործակցել մեզ հետ՝ այդպիսով օժանդակելով մնացյալ խնդիրների լուծմանը:

Խնդիրը հետևյալն է. մեր տնտեսության զարգացումն ունի երկարաժամկետ եւ կարճաժամկետ նպատակներ: Կարճաժամկետի առումով որոշակի հաջողություններ կան: Կունկրետ նախագծեր կան: Այս պահի դրությամբ արդեն 50-ից ավելի նոր ոճի, նոր որակի ՓՄՁ-ներ ենք ֆինանսավորել, որոնք, ըստ էության, աճի այլ տեմպ են ապահովում եւ այլ շուկաներ են մտնում: Դրանցից մի քանիսն անապայման արտահանման նոր ոլորտներ են բացահայտելու մեզ համար: Իսկ արտահանման ավանդական ոլորտները վերականգնվելու են: Դրանց կորստի պատճառը արտաքին գների շուկան էին, որոնք կարգավորվելու են: Բայց մեր մարտահրավերն այն է, որ զարգացման երկրորդ փուլում այդ ձեռնարկությունները վերաճեն իրենց ոլորտներում ներդրողների:

Մենք մի քանի ծրագիր ունենք, որոնց առնչությամբ դրսից ներդրումներ ենք ակնկալում: Առաջին հերթին դրանք ենթակառուցվածքային ծրագրերն են: Տարեկան կտրվածքով թվերը դեռեւս վերջնական չեն, բայց արդեն կարող եմ ասել, որ ՏՏ ոլորտը անցյալ տարվա համեմատ 17% եւ ավելի աճել է արձանագրել:

**- Վերջին 5-6 տարիներին ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում շուրջ 1.7% է: Դրա 17%-ով աճելն իհարկե ոգետորիչ է, սակայն ոլորտի մասնագետների հետ բազմաթիվ շփումները համոզում են, որ նրանք, մեղմ ասած, ոգետորված չեն ոլորտի նկատմամբ կառավարության ցուցաբերած վերաբերմունքից: Մասնավորապես՝ շարունակաբար դժգոհում են Ինտերնետի վատ որակից, բարձր գներից, հարկային-մաքսային մարմինների կամայականությունների եւ այլ խնդիրների առնչությամբ: Զննարկումներ են լինում կառավարության ներկայացուցիչների հետ, եւ օրերս ոլորտի ճանաչված մարդկանցից Հովիկ Մուսայեյանը հերթական հանդիպման ընթացքում ցավով նշեց, որ գրեթե ոչինչ չի փոխվել, բացառությամբ վարչապետի խիստ սրտացավ վերաբերմունքի, որը փոփոխությունների հույս է ներշնչում:**

- Ինտերնետ կապի որակի հետ կապված վերջին զարգացումները ակնհայտ դրական են: Եսկան նվազում կա այսօր Ինտերնետի մեծածախ գների առումով: Մեր ծրագրերի միայն հրապարակումը, որ ցուցանում է կառավարության հետեւողականությունը, մեծ արդյունք տվեց. մրցակցությունը ուժգնացավ, եւ

գները սկսեցին նվազել: Հզորություններն էլ ավելանում են: Գերմանական «Տետեկոն» խորհրդատվական խոշոր ընկերությունը, որին մենք վարձել ենք, երկու ամսվա ընթացքում պետք է տա ողջ Հայաստանի լայնաշերտ ցանցի զարգացման հայեցակարգը: Դրա մի մասն է լինելու ինտրանետը՝ կառավարության ներքին կապն այդ ցանցում: Դա 100 մեգաբիթ/վայրկյան արագությամբ ողջ Հայաստանի տարածքն ընդգրկող ծրագիր է: Երեւան քաղաքը եւ 42 շրջկենտրոններն ընդգրկված են առաջին փուլում, որը կավարտվի 1-1.5 տարվա ընթացքում: Այսինքն՝ ցանկացած ընկերություն, որ այսօր գործում է Հայաստանում, ի վիճակի կլինի Հայաստանի ցանկացած շրջանում իրականացնել նույն աշխատանքը, ինչ Երեւանում: 2-2.5 տարվա ընթացքում գյուղերն ամբողջությամբ ապահովված կլինեն բարձրակարգ Ինտերնետ կապով: Սրանց գումարվում են «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, Էլեկտրոնային քարտերի համակարգը, որով մարդիկ կարող են Էլեկտրոնային դաշտում տրանզակցիաներ անել: Այսինքն՝ բիզնես գրանցելու, հարկային հաշվետվությունների, բիզնեսի կառավարման խնդիրներ լուծելու համար այլեւս անհրաժեշտ չի լինի գյուղից շրջկենտրոն կամ քաղաք գալ: 100 մեգաբիթ/վայրկյան արագությունը գերհզոր ցանցի վկայություն է: Եվ դրա գները մատչելի են լինելու, միջազգայինին համարժեք՝ ամսական 20-25 դոլլար, առանց սահմանափակումների: Բնակարանում այն հզորության կապ ունենում, որ կարող ես վիդեոհեռախոս եւ ամեն ինչ ունենալ: Դա կոչվում է «կաբել դեպի տուն»: Սա մեզանում շատ լուրջ առաջընթաց է ապահովելու, եւ դա կառավարության վարած քաղաքականության արդյունքն է: Երկու տարվա ջանքերի շնորհիվ այսօր արդեն Համաշխարհային բանկի հետ այս ծրագիրը որոշակիացվում է մոտ 24 մլն դոլլարի շրջանակներում: Այդ գումարն ամբողջ խնդիրը չի լուծելու, բայց կատալիզատորի դեր է ունենալու, որպեսզի պետություն-մասնավոր հատված համագործակցության մոդելով կարողանանք տեղից շարժել, զարգացնել նախատեսված ծրագրերը: Մենք երկու ծրագիր իրագործեցինք վերջին մեկ տարվա ընթացքում, որոնք ցույց տվեցին, որ մեր ՏՏ ընկերությունները ոչ թե պետք է լինեն դրսի ընկերությունների ներկայացուցչություններ կամ նրանց պատվերները կատարողներ, այլ ինքնուրույն արդյունք ստեղծող կազմակերպություններ: Դրանցից մեկը «Ինսթիտյուցի» ընկերությունն էր,

որն իր արտադրանքը վաճառեց Գերմանիայում, երկրորդը «Սորսիո» ընկերությունն է, որտեղ պետությունը բաժնեմաս ունի, եւ ընկերությունը շատ արագ աճում է: Սրանք այն ծիլերն են, որ մեզ ոգետորել են: Եթե «Ինսթիտյուցի» հաջողությունը չունենայինք, երկրորդ քայլը չէինք անելու: Այստեղ նաեւ նորարարական բաղադրիչ կա, որը բաղկացած է երկու մասից եւ կոչվում է համակցվող դրամաշնորհներ: Եթե տնտեսավարող սուբյեկտը 50% ծախս է անում, ապա պետությունը 50% դրամաշնորհ է տալիս, որ նա իր գաղափարն իրականացնի՝ մինչեւ հասնի վենչուրային կամ այլ տիպի ֆինանսավորման: Նման գործիքներ ենք մշակում՝ գիտելիքի տնտեսություն ձեւավորելու համար: ՏՏ-ները բաղկացած են երկու մասից՝ արտադրանք եւ Ինտերնետ միջավայր: Իսկ Ինտերնետ միջավայրը գիտելիքի տնտեսության ենթակառուցվածք է, ու եթե այս ենթակառուցվածքն ունեն, կարող ես արտադրանքը ֆինանսավորել շատ ավելի ազատ:

**- Դուք բարձր գաղափարներից եք խոսում, եւ գյուղացի մարդ են, շատ բան չեմ հասկանում, բայց ավելի պարզ բաները հասկանում եմ, օրինակ՝ բյուջեից կրթությանը, գիտությանը հատկացրած ֆինանսավորման չափերը հասկանում եմ, կարողանում եմ համեմատել հարեւան (եւ ոչ միայն) երկրների համապատասխան տողերի հետ, կարողացել եմ այս թեմայով գրուցել ԵՊՀ-ի ռեկտորի հետ, Գիտության պետական կոմիտեի նախագահի եւ այլոց հետ: Աշխարհի մակարդակով չեմ ասում, բայց տարածաշրջանում էլ թե՛ հարաբերական եւ թե՛ ուղղակի առումով գիտությանն ու կրթությանը ամենաբիչ հատկացումները Հայաստանում են:**

- Ես համաձայն չեմ: Մենք այսօր գիտության, կրթության ոլորտում առաջին հերթին ունենք արդյունավետությունը բարձրացնելու խնդիր: Հարցը կրթության վրա կառավարության ծախսելիք դրամի սահմանափակումը չէ: Կարծում եմ՝ եթե գիտությունն ընթանա համախմբման, արդյունավետության բարձրացման ու միջազգայնացման ուղով, մենք կկարողանանք առաջ գնալ: Հակառակ դեպքում մեզանում մշտապես սոցիալական ծախսերն ավելի կարելու են լինելու, որովհետեւ երբ առկա է որոշակի բարդության իրավիճակ, ինչպես նաեւ զարգացածության որոշակի մակարդակ, եւ ուզում ես ինչ-որ բան ավելի արագ զարգացնել, այն պետք է միջազգայնորեն գերիշխող (մրցունակ) լինի, որպեսզի



այդ ուղղությամբ ծախսեր անելու ռիսկ ստանձնես: Մասնավոր օրինակ բերեմ. մեր Ֆիզիկայի ինստիտուտ եկան միջազգային գիտնականներ ու եզրահանգեցին, որ ինստիտուտի աշխատանքի 80%-ը մրցունակ է: Բայց մնացյալ 20%-ը մրցունակ է, եւ այդ ուղղությամբ պետք է ջանքեր գործադրվեն: Մեզ տվեցին վերակառուցման հստակ ծրագիր, որը Ֆիզիկայի ինստիտուտի համար նշանակում է եական վերափոխում: Եվ կառավարությունը 1-2 տասնյակ մլն դոլլար ներդրում է անելու այդ ուղղությամբ: Ֆիզիկայի այդ ուղղությամբ զարգացնելու, օնկոլոգիական հետազոտությունների կենտրոն հիմնելու աշխատանքներ են տարվում, եւ դրա շարունակությունը լինելու է Դուբնայի մեր գործընկերների միջուկային հետազոտությունների կենտրոնի հետ համագործակցությունը: Նաեւ հնարավոր է Ֆրանկֆուրտի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի համանման ինստիտուտների հետ համագործակցություն հաստատել: Այսօր Ֆիզիկայի ինստիտուտի տարեկան բյուջեն կազմում է 1 մլն դոլլար:

**- Դա կարելի՞ է համարել բյուջե:**

- Բայց մենք 20 մլն դոլլարի ներդրում ենք անելու: Նշանակում է՝ ինստիտուտի բյուջեն կբազմապատկվի, բայց դա անելու համար որքան ջանք է գործադրվել, ու դեռեւս վերափոխումը չենք սկսել: Պետք է մարդկանց սպասումները կառավարել, քանի որ գիտական աշխարհում մարդիկ հեղինակություն են, ու եթե իրենք չընկալեն, չփոխվեն, շատ դժվար կլինի նրանց վերափոխելը: Երբ ասում են՝ պետությունը քիչ է ֆինանսավորում, դա պետք է դիտարկվի որակ-գին հարաբերակցության մեջ: Այսօր վարչապետի գլխավորությամբ ձեւավորված մրցունակության խորհրդում (մասնավոր-պետական համագործակցության սկզբունքով) օրակարգային թիվ մեկ խնդիրը կրթությունն է՝ որպես մրցունակության չափանիշ: Գիտության, կրթության, տեխնոլոգիաների եւ տնտեսության հետ դրանց կապի շուրջ քննարկումները բավական ջանք ու ժամանակ են պահանջում:

**- Գիտության ոլորտում, ինչպես մոդայիկ է անել, լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն կա, որից հետո իրոք ներդրումներ կարվեն եւ կլինեն արդյունավետ: Բայց ամենից առաջ քաղաքական կամք ու վճռականություն է պետք: Բոլորս էլ շատ լավ գիտենք, որ գիտահետազոտական գործող ինստիտուտներում մինչեւ 6-7 հազար մարդ է հաշվարկվում, ովքեր այլևս գիտության անելիք չունեն: Հասկանալի է՝ նրանց հեռացնելը սոցիալական անցանկալի հետեւանքներ**

**րի կերքի: Այս վիճակն էլ գիտության անլուծյան է բերել (իհարկե՝ միակ պատճառը չէ): Կառավարությունը չի գնում հարցին լուծում տալու համարձակ քայլի: Իսկ երիտասարդ, հեռանկարային կարգերը, հատկապես բնական գիտությունների ոլորտներից, լքում են Հայաստանը:**

- Համակարծիք չեմ, որ քայլեր չեն արվում: Ուղղակի համարձակությունը, քաջությունը եւ քաղաքական կամքը, միմյանց կապված լինելով, ունեն նաեւ առանձնահատկություններ: Քաջություն եւ ձեռք բերում, եթե տեխնիկապես փոփոխությունը պատկերացնում ես: Դրա համար մենք պետք է կարողանանք առանձին վերլուծություններ պատվիրել: Նման մի քանի միջոցառում արդեն իրականացվել է: Պետք է վերլուծությունների շնորհիվ հասկանա սփոփոխությունները, որպեսզի քաջությամբ իրականացնես: Հակառակ դեպքում, եթե այդ փոփոխությունները քննարկում ես ընդհանրական, միշտ նույն եզրահանգումներն ես անում, չկա անկախ վերլուծություն: Հիմա ես ուսումնասիրում եմ՝ Նախկին ԽՍՀՄ-ից ժամանագած հետազոտական եւ զարգացման ինստիտուտները վերակառուցելու վերաբերյալ ՀԲ-ի հետազոտությունը: Վերլուծություններից հետո մշակվում է ծրագիր, եւ անցնում են վերափոխումների: Քաջությունն այդտեղ է ծնվում, ու մինչեւ դա չարվի, առաջ գնալն անհնար կլինի:

**- Մինչ վերլուծենք, որ հաճախ տարիներ է տեսնում, հետո եզրակացություն ու առաջարկ անենք, ու մինչ դա տեղ կհասնի, ծրագիր կմշակվի, ապագա գիտականը հեռանում է, նրան տանում են երկրից:**

- Սա կարող է վերածվել տեսական բանավեճի: Այսօր աշխարհը չի քննարկում ուղեղների արտահոսքը, քննարկում է ուղեղների շրջանառությունը: Մարդիկ այսօր պետք է գնան, դրսում սովորեն, ըմբռնումը փոխեն: Եվ Սփյուռքի ներուժի օգտագործումը այլ երկրներում դա է ցույց տալիս. ովքեր գնացել են ու այնտեղ հասել հաջողությամբ, նրանք են առաջին ներդրումները բերում ինստիտուցիոնալ ներդրումների ձեւով: Դրսում հասնելով հաջողության՝ նրանք նույնը ստեղծում են հայրենիքում:

Այստեղ արդեն խնդիրը մեր բաց լինելու մեջ է, եւ կարծում եմ՝ մեր քաղաքականությունն այսօր նպաստում է դրան: Մենք պետք է հասարակության հետ սկսենք քննարկումը՝ ուղեղների շրջանառության եւ ոչ թե ուղեղների արտահոսքի վերաբերյալ: Մենք պետք է պատրաստ լինենք թանկ վճարել, որպեսզի դրսի

պրոֆեսիոնալն այստեղ կարողանա գտնել իր միջավայրը:

**- Պետք է ունենանք, որ վճարենք:**

- Ոչ, ինքը կստեղծի, եթե մենք ընկալենք դա:

**- Պետք է համապատասխան միջավայր լինի, որ կարողանա ստեղծել:**

- Ոչ: Մեկը բանկ է բացում կամ փոստի կառավարիչ դառնում եւ տարեկան 200 հազար դոլլար աշխատավարձ է ստանում, ու մեր հասարակությունը սկսում է քննադատել՝ խնդիր չի ընկալում: Դա մենք չենք ստեղծել, ինքն է եկել, իր պայմանագրով, իր աշխատանքով ստեղծել: Մեր ընկալումն այդ ուղղությամբ պետք է փոխվի: Նույնը պետք է փոխանցվի նաեւ հանրային կառույցներին: Մենք որոշակի խնդիրներ ունենք, որոնց լուծումը պահանջում է շատ բարձր պրոֆեսիոնալիզմ, որի համար պետք է կարողանանք վճարել: Եվ սա կարելուրագույն ըմբռնում է, որպեսզի մեզ անում փոփոխություններ լինեն:

**- Ինչ-որ տեղ, ինչ-որ առումով սա նորմալ է: Բայց երբ ճգնաժամ է, ու որպեսզի բանկը չփլուզվի, պետությունը հսկայական միջոցներ է հատկացնում բանկին, վերջինս էլ դրա մի զգալի մասը հատկացնում է բանկի վերնախավին՝ պարզեատրումների տեսքով, դա արդեն հասարակության համար ընկալելի լինել չի կարող: Նույնը կարելի է ասել շատ սովորական ՊՈԱԿ-ների եւ այլ կառույցների մասին: Ինչեւ, թողնենք:**

**Դուք նշում եք առանձին ճյուղերի, անգամ առանձին կառույցներին աջակցություն ցուցաբերելու մասին: Անկախացումից արդեն գրեթե 20 տարի է անցել, եւ մեր պետությունը իր ու նույն հասարակության համար առայսօր չի հստակեցրել առաջնայնությունները: Խոսքը վերաբերում է նաեւ արդյունաբերությանը: Ձեր ղեկավարած Նախարարությունը այս օրերին, շուրջ 20 տարի ուշացումով, պետք է ներկայացնեք արդյունաբերության ոլորտի առաջնայնությունները: Որքան գիտեմ՝ դեռեւս չեք ներկայացրել:**

**- Մենք մշակել, ներկայացրել էինք:**

Առանձին ոլորտային վերլուծություններ իրականացրել ենք: Ամբողջացնելու առումով մնում է մի քանի ոլորտ: Իհարկե՝ ճգնաժամը որոշակի խնդիրներ ստեղծեց, հատկապես՝ քիմիական ու հանքային արդյունաբերության մեջ, որոնց համար պետք է երկարաժամկետ ծրագրեր մշակենք: Մնացած ոլորտներում վերլուծություններ իրականացվել են, առանձին ռազմավարություններ ընդունվել են: Եկող տարվա ընթացքում, ԱՅԻԾ-ի վերանայմամբ, այդ ամբողջը համախմբված

ձեռով կներկայացնենք, միաժամանակ՝ կդիտարկենք նաեւ արտահանման ներուժի տեսանկյունից: Հիմա խնդիրը հետեւյալն է. մենք ասել ենք, թե որոնք են մեր մրցունակության նիշերը: Երկիրը ավանդական, Սովետական Միության գործոնների վրա հիմնված տնտեսությունից, երբ հուժը էինք վաճառում կամ այն մեկ աստիճան վերամշակելուց հետո էինք վաճառում, պետք է անցում կատարի ավելի բարձրարժեք, վերջնական սպառման տնտեսություն, որտեղ բարձրարժեք ծառայությունները նույնպես պետք է աճեն: Այս ճանապարհին մենք մեր խնդիրները եւ գործիքները ձեւակերպել ու ձեւավորել ենք: Դա ենթադրում է այդ որակի ձեռներեցների համակցում, ովքեր կպրպտեն, կմշակեն այդ գաղափարները եւ կհասցնեն այն մակարդակի, որ կարելի է ֆինանսավորել: Այսօր հարցը ոչ թե ֆինանսավորման խնդիրն է, այլ գաղափարները հասունացնելու: Եկող տարի արդեն որոշակի, առարկայական 5-10 մլն դոլլարի ծրագրեր կլինեն՝ ուղղված ձեռներեցների բանակի ստեղծմանը: Սրա համար քիչ համբերություն է պետք: Արդյունաբերական քաղաքականությունը պետք է զարգացնել այդ ուղղությամբ: Այս համատեքստում մենք փորձելու ենք գիտություն-կրթություն-արդյունաբերություն եռանկյան որոշակի ենթակառուցվածքներ ֆինանսավորել: Ասենք՝ ինժեներական լաբորատորիաների հիմնում, որպեսզի ուսանողը Պոլիտեխնիկն ավարտելով կարողանա միանգամից աշխատել բարձր տեխնոլոգիական ընկերությունում: Բացի այդ, լաբորատորիաները թույլ կտան ստեղծված նորությունը փորձարկման ենթարկել, ինչը այդ գաղափարի ֆինանսավորման հեռանկար է ապահովում, որպեսզի չգնա այլ միջավայր իրականացվելու: Սրանք ենթակառուցվածքներ են, որտեղ մենք կոնկրետ անելիք ունենք: Դրանում մեզ աջակցում է ՀԲ-ն, որն ունի փորձ ու հատկապես մասնավոր հատվածի, ինչպես նաեւ արտահանման զարգացման հետ կապված կարողություններ:

Ամփոփեմ՝ որն է առաջնահերթություն. մենք պետք է օժանդակենք բարձրարժեք, բարձր տեխնոլոգիական լուծումներ ունեցող ուղղությունների զարգացմանը, ներառյալ՝ գյուղատնտեսության ոլորտում: Դա հնարավորություն կտա, որ մեր արտահանումը եսպես աճի: Բայց այդ ճանապարհին մեզ պետք են կոնկրետ ձեռներեցներ, նախաձեռնողներ, ովքեր կարող են այդ մակարդակի գաղափարը զարգացնել եւ իրականացնել: Այդ ուղղությամբ եկող տարի

լուրջ ներդրումներ ենք իրականացնելու, որպեսզի տարեկան 100 եւ ավելի նման սուբյեկտներ ձեւավորվեն ու կարողանան առաջ տանել գործընթացը: Այստեղ պետք է գործի դնենք մեր զարգացման գործակալությունները: Խոսքը եւ՝ Չարգացման հայկական գործակալության, եւ՝ ՓՄՁ ՉԱԿ-ի, եւ՝ վարկային կազմակերպությունների մասին է: Իրենք պետք է այդ ռազմավարական ուղղություններով զանգվածային ներդրումներ իրականացնեն, որն արդեն սկսել են:

**- Ելնելով մասնագիտությունից՝ հետեւում ենք գործընթացներին թե՛ ընդհանրապես եւ թե՛ մասնավորապես: Մեր տեսադաշտում հայտնված ընկերությունը ներկայացրել է բիզնես ծրագիր, որն արժանացել է կառավարության նախնական հավանությանը: Ապրիլ-մայիս ամիսներին կառավարությունից ուղարկվել է ՓՄՁ ՉԱԿ եւ ճանապարհին «մնացել է» Գյուղատնտեսության նախարարությունում՝ արդեն ավելի քան 5-6 ամիս: Մինչդեռ կառավարությունը շարունակ կշում է այս պայմաններում դրսևորվող օպերատիվությունը, սկզբունքայնությունը: Նույն տրամաբանությամբ՝ Արտաշատի պահածոների գործարանը դիմել էր կառավարությանը՝ 2 մլն դոլլար վարկի խնդրանքով՝ պատրաստակամություն հայտնելով մթերել առաջարկվող ամբողջ գյուղմթերքը: Ամիսների ուշացումով տրամադրվեց ընդամենը 1 մլն դոլլար, որը լուրջ դժգոհությունների տեղիք տվեց, եւ խնդիրներ առաջացան մթերումների առումով:**

- Ծրագրերի տեղատարափի ավելի քան 90%-ը ծրագրեր չէին: Ընդամենը լավ կամ վատ գաղափարներ էին: Մենք շատ վատ հոգեբանական վիճակի միջով ենք անցնում. պետությունը սորից սկսեց փող բաժանել, գնանք հերթ կանգնեք: Կային նաեւ անցանկալի դրսևորումներ, երբ ոչնչով չհիմնավորված ինչ-որ հաշվարկներ էին ներկայացվում, եւ դժգոհում էին, որ իրենց մերժում են: Ես չեմ ժխտում, որ մենք բյուրոկրատական որոշակի խնդիր ունենք, որովհետեւ մեր երկրում բյուրոկրատիան չենք հաղթահարել: Ջայլամի քաղաքականություն չվարենք: Բայց դրան գումարվում է նաեւ մյուս կողմի ոչ համապատասխան պահվածքը: Թռչնաբուծության ոլորտում բազմաթիվ քննարկումներ կազմակերպեցինք, սակայն չկարողացանք հասկանալ, թե ոչնչություն որտեղ են եւ ինչպես են չափվելու: Իսկ այն ոլորտները, որոնք ճգնաժամի պատճառով ակնհայտ սուժեղ են, միանշանակ օգնություն են ստացել: Ակնհայտ է, օրինակ, որ մթերումների

ժամանակաշրջանում բոլորին ֆինանսավորում ենք ապահովել: Մինչեւ 10 մլն դոլլարի գումարներ են հատկացվել: Խոսքը վերամշակող ձեռնարկությունների մասին է: Բոլոր ձեռնարկությունների պահեստների մնացորդը մենք վերաֆինանսավորել ենք: Այսինքն՝ ժամանակավորապես ֆինանսավորել ենք, որ իրենք վաճառեն:

**- Հետաքրքիր իրավիճակ է առաջանում: Դուք պնդում եք, որ կառավարությունը մթերողներին գումարներ է տվել՝ մթերումների կազմակերպման համար, գյուղացիների զգալի մասը (չեմ համարձակվում ասել մեծամասնությունը) գումար չի ստացել: Շատերի հետ պայմանավորվածություն կա, որ կստանան մարտ-ապրիլ ամիսներին: Այդ դեպքում կառավարությանը չի՞ հետաքրքրում, թե ուր են ուղղվել իր՝ այդքան դժվարությամբ ձեռք բերած գումարները:**

- Անընդհատ հետեւել ենք, բայցեւ չեմ բացառում, որ այդ խնդիրը կարող է լինել, որովհետեւ նման իրավիճակում բոլորն օգտվում են առիթից: Բայց կառավարությունը բաց է պահել այդ պատուհանը, որպեսզի մթերողներն իրենց պարտավորությունները կատարեն: Պարզապես վերջիններս պետք է իրենց կարողությունը համապատասխան պարտավորություններ ստանձնեն: Այս տարի պետությունը որոշակի պատասխանատվություն է ստանձնել, որպեսզի իրենք ավելի շատ կամ ավելի բարձր գնով մթերումներ անեն՝ այս գործընթացը չխաթարելու համար: Եվ հասկանալի է, որ արտակարգ իրավիճակներում ամեն ինչ չի կարող հարթ ընթանալ:

**- Չքննարկենք, թե որքանով է համապատասխանում իրականությանը, բայց ըստ պաշտոնական տվյալների՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղված է շուրջ 500 հազար մարդ: Ի՞նչ է անում պետությունը՝ այս ոլորտում ճգնաժամի հարթահարման ուղղությամբ:**

- Առաջին քայլը, որ արել ենք, ՓՄՁ-ի ֆինանսավորման համար գումարներ տրամադրելն է: Այն բանկերը, որոնք սովորաբար գյուղատնտեսությանը վարկեր էին տրամադրում, իրենց ծավալները չեն նվազեցրել: ՓՄՁ-ի մասով շարժը վերընթաց է: Հաջորդը. կառավարությունը անցած տարի բավական մեծ գումարներ հատկացրեց սահմանամերձ շրջանների վարկավորման ծրագրին: Մենք ոչ միայն շարունակեցինք սուբսիդավորումը, այլեւ նոր մոտեցում ներդրեցինք: Հարցը «Թամարա Ֆրուտի» հետ կապված միջոցառմանն է վերաբերում: Եթե դա հաջողվի, էապես կփոխվեն զվարդածության ո-



րակն ու մակարդակը գյուղատնտեսության ոլորտում, որովհետև դա տեխնոլոգիա է փոխանցում, գիտելիք է փոխանցում, եւ դրանով իսկ անցում կկատարենք բարձրարժեք գյուղատնտեսության: Սա ռազմավարություն է: Ինքնին խնդրահարույց է, որ 500 հազար մարդ է զբաղված այս ոլորտում: Աշխարհի որեւէ երկրում գյուղատնտեսության մեջ այդքան մարդ չի կարող տեւականորեն զբաղված լինել: Որովհետև եկամուտը վերաբաշխվում է, եւ գյուղում պետք է արտադրողականությունը բարձրացնել: Բավական բարդ խնդիր է հավաքագրման, տեսակավորման եւ արտահանման հայեցակարգն իրականացնելը, որի ձեւավորման վրա աշխատում ենք, եւ պարոն Էռնեկյանի հետ միասին պետական-մասնավոր համագործակցության այդ մոդելն ուզում ենք հաջորդ տարվանից կյանքի կոչել: Չվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի-Լոգիստիկ կենտրոնի ծրագրի շրջանակներում: Դա թույլ կտա, որ հողի գինը բարձրանա: Այսինքն՝ մարդիկ էլ չեն թողնի անմշակ հող, որովհետև իրենք գիտեն ինչ արժեք ստեղծել դրանից: Եթե միրգը եւ բանջարեղենը քաղելուց հետո անմիջապես 15 աստիճանում սառեցնես, սեզոնային պիկի ժամանակ շուկա լցնելու փոխարեն կարող ես սպասել ու հետագայում վաճառել: Առաջին հայացքից այս գործընթացը հասարակ է թվում, սակայն այդպիսի մշակույթն է պետք, որպեսզի մարդիկ ներդրում անեն: Դա թանկ բան չէ, բայց գիտելիքի պակաս է: Դրա համար արտահանման այս նոր մոդելը առաջ ենք մղում, ինչի արդյունքում ապրանքների գները որոշակիորեն բարձրանալու են, բայց դա կլինի հոգուտ գյուղացու, որը կբերի աշխատելու եւ տեխնոլոգիաներ ներդնելու մեծ ցանկություն: Հիմա մտածում են պահպանման եւ փաթեթավորման մասին, որից հետո հնարավոր կլինի դրսի շուկաներում դրանք վաճառել: Սրանք տեխնոլոգիաներ են, որ մենք պետք է սովորենք. ողջ աշխարհը այդ ճանապարհն անցել է: Այստեղ սկսել ենք ներդրումներ անել: Ծիշտ է՝ միանգամից հնարավոր չէ մտնել դրա մեջ, բայց պիլոտային ծրագրով փորձում ենք դա շարժել: Մարդկանց մոտ բարդ գործ անելու ցանկություն պետք է առաջանա: Պետք է պարզապես քիչ համբերատար լինենք եւ գնահատենք միջանկյալ արդյունքները: Այլապես բոլորը վերջնական արդյունք են ուզում, բայց նախ դրա մասին պատկերացում բունեն եւ, որ ավելի վատ է, համբերություն էլ չունեն: Անընդհատ վերջից

խոսելով՝ քաղաքականություն իրականացնողին ներքաշում եք այդ քննարկման դաշտ, եւ նա գործընթացն առաջ տանելու փոխարեն ստիպված է լինում քննարկումների մեջ մտնել:

Պետությունը ներկայում օժանդակում է նաեւ գյուղաբերքի վերամշակման ընկերություններին, մասնավորապես՝ մենք հիմա օժանդակում ենք գինու գործարանի, որը կառուցվում է ՀՀ Արագածոտնի մարզում, որի սարքավորումները գրեթե ամբողջությամբ բերվել են Իտալիայից եւ ԱՄՆ-ից: Հայաստանում այն ունի ավելի քան 100 հա խաղողի այգիներ:

**- Համաձայն եմ, որ քննարկումների մեջ չմտնենք եւ գործընթացն էլ չխաթարենք, որովհետև դա առանց մեզ էլ շատ հետաքրքիր ձեւով կարող է անել եւ լավագույնս աւուր է մաքսային ցանկացած տեսուչ, Ձեր ներկայացրած ամբողջ շրջային մի օղակը խաթարվում է, եւ գործընթացը, որքան էլ չենք ցանկանում, որքան էլ դա մեզ դուր չի գալիս, հավասարվում է գրոյի:**

- Դա խնդիր է, մեզ համար մարտահրավեր է, մենք դա չենք թաքցնում, բայց ես չեմ կասկածում, որ եթե այս վերջնական նպատակի շուրջ համաձայնությունը կառուցենք ու քիչ համբերատար լինենք, այդ խնդիրները աստիճանաբար կլուծվեն, որովհետև ստեղծվելու է այսպես կոչված հոսք: Երբ ինչ-որ ուղղությամբ հոսք է գնում, խնդիրները սկսում են լուծվել: Երբ այն չկա, գործողությունները դրվագային են, ու միշտ հայտնվում են խուլթեր, որոնք շատանում են, որովհետև մարդիկ իրենք էլ են իրենց վարքագծով խնդիրներ ստեղծում: Մարդն իր խնդիրը արագ լուծելու համար կարող է մեր հասարակության մեջ մի ամբողջ համակարգ քանդել:

**- Ձեր թույլտվությամբ՝ երկու խոսքով անդրադառնամ խաղողի Ձեր օրինակին, եւ անցնենք առաջ: Դուք որպես նորություն ներկայացրիք դրա սառնարանային պահպանումը, բայց դա մեզանում կա ավելի քան 30 տարի: Սովետմիության օրոք դրա արտահանման առումով խնդիր չկար: Այսօր տասնյակ հազարավոր տոննաներով արտահանվում է, բայց մաքսային ցանկացած բարձրաստիճան տեսուչ, դա ասում եմ այս բիզնեսով զբաղվողների խոսքի հիման վրա, կարողանում է եսպես ազդել ամբողջ այս գործընթացի վրա:**

- Անցած տարի մենք 2.5 տոննայից ավելի, այսպես ասած, խուլթը հանեցինք, եւ հիմա պետք է գնահատենք դրա արդյունավետությունը: Բայց այս պահի դրությամբ՝ արտահանման ընթացա-

կարգերը ավտոմատացվել են, եւ կոնկրետ այդ օրինակները քննարկելը կարելու է, որպեսզի պրակտիկայում դա վերանա: Դա օրենսդրության խնդիր չէ, պրակտիկայի խնդիր է:

**- Դա նաեւ օրենսդրության խնդիր է:**

- Եթե նման խնդիր կա, ապա այն պետք է քննարկենք: Չի եղել նման օրենսդրական խնդիր, որ բարձրացվի եւ լուծում չստանա: Մենք առնվազն շաբաթ մեկ անգամ հարկային, մաքսային խնդիրներ ենք քննարկում եւ առարկայական հարցեր ենք լուծում: Խնդիրները բազմաթիվ են:

Որպես մեր զրույցի ամփոփում՝ պետք է նշեմ, որ ըստ Եուրոյան՝ մեր հիմնական մարտահրավերը մնում է մեր տնտեսության դիվերսիֆիկացիան: Դիվերսիֆիկացման իրական թիրախը պետք է լինի արտահանման ծավալների ավելացումը: Ես սխալ եմ համարում ներմուծում-արտահանում ճեղքվածքի նվազեցումը: Խնդիրը պետք է լինի մեր արտահանման ներուժի ավելացումը: Այս առումով պետք է կոնստեսուսի գանջ այն հարցի շուրջ, թե որտեղ են մեր մրցակցային առավելությունները: Իհարկե, մենք դրանք ձեւակերպել ենք՝ կրթություն, առողջապահություն, ծառայություններ եւ բարձր տեխնոլոգիական բարձրարժեք արդյունաբերություն, որը ներառում է նաեւ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, քիմիա: Մեր նախարարության ռազմավարության մեջ սրանք ձեւակերպված են: Այս ուղղություններով մենք ավարտում ենք հետազոտությունները, հրապարակել ենք զեկույցը, որը նշում է ամբողջական շրջանակը: Առանձին ոլորտներում ունենք ռազմավարություններ, որոնք արդեն մեկ տարուց ավելի իրականացնում ենք: Հաջորդ տարի ավելի թիրախավորված բացահայտելու ենք ոլորտները եւ օժանդակման գործիքները: Այդ գործիքները ուղղված են լինելու որոշակի ոլորտներում ձեռնարկատիրական մղումների ձեւավորմանը, որպեսզի մարդիկ իրենք կազմեն իրենք բիզնես ծրագրերը, ստանան բավարար օժանդակություն՝ ռիսկը նվազագույնի հասցնելու եւ հետագայում աճի ավելի մեծ տեմպեր դրսեւորելու համար, այդ թվում՝ արտահանման ոլորտում: Սա է լինելու մեր քաղաքականության տրամաբանությունը: Իսկ ոլորտային առումով, իրոք, բարձրարժեք ծառայությունները լինելու են առաջնահերթ, գիտելիքի վրա հիմնված ճյուղերը լինելու են տնտեսության շարժիչը: Մնացած մասով ակնկալում եմ տնտեսության արդիականացում: ■